ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ազգիս Վեհափառ Հայրապետի կոնդակի հիման վրայ (Յունուարի 10, թիւ 50) անցեալ 1903 թուի «Արարատ»ի Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր ամիսների համարները լոյս չեն տեսնելու հետևեալ պատճառով։ Մայր Աթոռի Ուսումնական Մնայուն Յանձնաժողովի երկու անդամներ՝ Տ. Կարապետ և Տ. Յուսիկ վարդապետները, որոնք ստանձնել էին «Արարատ»ի խմբագրութեան գործը՝ Նոյեմբեր ամսում պաշտօնով վիճակներ ուղարկուեցին և թերթը մնալով առանց խմբագրողների, համարները իրենց ժամանակին լոյս չտեսան։ Արդ՝ Վեհափառ Հայրապետը հրամայել է, որպէս զի չըյետաձգուին նաև այս տարուայ համարները, նախընթացները չըհրատարակել և աշխատել առաջիկայ տարուան ընթացքում ուղիղ ժամանակին հասցնել թերթը, իսկ բաժանորդներին բաւարարութիւն տալ՝ չստացած համարների փոխարէն ուղարկելով Մայր Աթոռում տպագրուած մի գիրք։

Յանձնաժողովը ի նկատի ունենալով, որ Արարատի բաժանորդների մեծագոյն մասը հոգևորականներ են, որոշեց նոցա ուղարկել Գրիգոր եպիսկոպոս Ազափիրեանցի գերմաներէնից թարգմանած՝ «Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ» գիրքը, որ բաղկացած է 10 հատորից և որը 1897 թուին լոյս է տեսել երկրորդ հրատարակութեամբ։